ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ք. Երևան

25.07.2019թ.
Ժամը 14:45

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
- ՀՀ ՋՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Վ.Վահանյանը,
գնահատողներ՝
- ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ.Անտոնյանը,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍԱ բաժնի գլխավոր մասնագետ Հ.Ավետիսյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը,

Ընդունել ի գիտություն, որ նիստին բացակայում էր գնահատող հանձնաժողովի նախագահ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ Ա.Նազարյանը, այդ իսկ պատճառով հանձնաժողովի նախագահի լիազորությունները իրականացնում էր ՀՀ ՋՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Վ.Վահանյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.
(Մ.Ամիրյան)

1. **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3»** ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.07.2019թ.-ի որոշման մեջ ուղղում կատարելու վերաբերյալ.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
(Մ.Ամիրյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3»** ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.07.2019թ.-ի 4.1 որոշման համաձայն 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել **«Ջետտա» ՍՊԸ-ն /հանդես է գալիս համատեղ գործունեության պայմանագրով «Արմֆարմ» ՍՊԸ-ի հետ/:** Մասնակցի կողմից ներկայացվել է գնային առաջարկ որում գինը /4 279 000 ՀՀ դրամ/ ներկայացված է առանց ԱԱՀ-ի:
19.07.2019թ.-ին մասնակցին ծանուցվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվելու մասին:
Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության նախարարի տեղակալից 25.07.2018թ.-ին ստացված թիվ 03/27-1/13539-18 գրության, ՀՀ հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ համատեղ գործունեության պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունները չեն կարող համարվել շրջանառության հարկ վճարողներ:

1.2 Հաշվի առնելով վերոնշյալը **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3»** ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց **«Ջետտա» ՍՊԸ-ի /հանդես է գալիս համատեղ գործունեության պայմանագրով «Արմֆարմ» ՍՊԸ-ի հետ/** կողմից ներկայացված հայտը՝ 1-ին չափաբաժնի մասով, մերժել:

1.3 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3»** ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել **«Խաչպար» ՍՊԸ**-ին:

1.4 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղեր զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3»** ծածկագրով ընթացակարգի հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը, միաժամանակ ծանուցել մերժված մասնակցին՝ սույն որոշման մասին:

1.5 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.
(Մ.Ամիրյան)

2.1 **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/3»** ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղեր զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 16:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) _____ Վ.Վահանյան
Գնահատող _____ Գ.Անտոնյան
Գնահատող _____ Հ. Ավետիսյան
Գնումները համակարգող _____ Մ.Ամիրյան